

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ

Մկրտիչ Պեշիկպաշեանի «Քերթումնիս ու ճառերը», հրատարակութիւն
Ա. Չոպանեանի, Փարիզ, 1904 թ., դիմն է 4 ֆրանկ:

Այսօր. որ «Անահիտ»-ի տպարանում տառերը բաւական
մաշուած են երևում, եթէ ոչ այս հրատարակութիւնը կարող էր
չքեղ համարուել: Այս հատորի մէջ հաւաքուած են բանաստեղ-
ծի ոտանաւորներն ու ճառերը: «Ուրիշ հատոր մը պիտի պա-
րունակէ թատրերգութիւնը», ասում է հրատարակիչը: Աւելա-
ցրուած են երեք տաղեր. գրարար քերթուածների տակ դրուած
են աշխարհաբար թարգմանութիւնը և «Նօթեր» բաժնում
հրատարակիչը տալիս է զանազան բացատրութիւններ Պէշիկ-
թաշեանի բանաստեղծութիւնների մասին: Այդպիսով մեր
գրական խոշոր դէմքերից մէկի բոլոր երկերի ժողովածուն հը-
րատարակուելով՝ դիւրութիւն է տրւում լիակատար կերպով
ծանօթանալ նրա հետ. երևի երկրորդ հատորում հրատարակիչը
կ'աշխատի դնել Պէշիկթաշեանի նաև կենսագրականը, որ մին-
չև այժմ լոյս տեսած հրատարակութիւնների մէջ շատ թերի էր:

Na.

4. Ս. Էփրեկեան՝ «Պատկերագրող Բնաօխարհիկ բառարան»,
հատոր առաջին, գիրք ա., երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1903: Իւրա-
քանչիւր հատորի բաժնեգինն է 6 ռուբլի:

Պատկերներով զարդարած գեղեցիկ տպագրութիւն է այս
գիրքը, որ անհրաժեշտ է իւրև Հայաստանի աշխարհագրու-
թեան մի էնցիկլոպեդիական բառարան: Այն, ինչ տալիս է մեր
գրականութիւնը Հայաստանի զանազան տեղերի մասին, ամփո-
փուած է այս հրատարակութեան մէջ: Մի պակասութիւն, որի
վրայ արժէր ուշադրութիւն դարձնել, այն է որ և ոչ մի քար-
տէզ չէք գտնի այդ «Աշխարհագրական» բառարանում. ցանկալի